607
138

ԲՆԱԿԱՆ

ԽՆԱՄԱԾՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԱՌԱՔՆՈՐԴ ՄԱՐՑ ԱՄԵՆԱՀԱՐԿԱՒՈՐ

ՄԷԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սիկ
343

ԱՅԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ԵՐԻՑԵԱՆ Հ. ՃԷԶՊԷՅԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՓԱՓԱԶԵԱՆ

1859

Մայրեր.

Խղճմտանքը երբ կը խօսի ձեզի՝ կը յուսամ՝ որ դուք ալ եւս չիպիտի կենաք անոր քանի մը վայրկեան լսելու. և եթէ իր առաջարկութիւնը առ ձեզ օրինաւոր դատէք՝ 'ի գործ պիտի դնէք զայն. խորհելով որ ամեն մարդ պարտի վերհանձն ըլլալ, և հետևապէս ընել ինչ որ բնութիւնը խղճմտանքին բերնովը իրեն կը խօսի, և կը յայտնէ թէ, այս ընելը քու պարտականութիւնդ է, ով մարդ, և Նրկինք անպարտ չիպիտի թողու քեզ երբ քեզի ինկած պարտականութիւնդ կատարել չ'ես կամիր. և ինչ բանի մէջ արդեօք բնութիւնը կը խօսի մեզ որչափ որ կը խօսի Մարց 'ի մասին իրենց մանկունքը սնուցանելու բնական և բարոյական կերուկուրնելով, և նոյն ժամանակը ինչ բանի մէջ մարդիկ այնչափ կը հակա-

ռակին բնութեան պահանջմանցը որ-
չափ որ մայրերը խուլ եղած անոր
ձայնին, կոյր՝ անոր ցուցցած շաւղին,
հեռի բոլորովին օգտակարէն, գրկած
ամեն չար հեռանք ունեցող միջոց-
ները հոգ չեն տանիր իրենց շնորհուած
տղեկներուն : Ընդհարին յիմարու-
թիւն . . . . . մայրեր, ձեզ կը խո-
սիմ, ոչ ես՝ այլ բնութիւնը. եթէ կ'ու-
զէք, մտադիր եղէք ինձ. քիչ մը, ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզ որ եթէ Աբարիչն
Աշխարհիս զձեզ դատապարտելու
ուրիշ պատճառ չունենայ, գիտցիք
որ ձեր այս մասին մէջ ունեցած վը-
տանգաւոր տգիտութեանցը համար
իրաւունք պիտի ունենայ զձեզ անանց
դատապարտութեան յանձնելու .
ուստի խելքերնիդ գլուխնիդ բերէք,
և գէթ ձեր անձինքը դատապար-
տութենէ փրկելու համար՝ լաւ հո-
գացէք ձեր մանկունքը մտադիր ըլ-
լալով միշտ բնութեան՝ որուն տուած

դասերը այս մասին երբէք չեն սխա-
լեր, այլ ընդհակառակն առատօրէն
կը վարձատրեն այն մայրերը՝ որոնք ի-
րեն առաջնորդութիւնն ընդունելով՝
հոգ կը տանին իրենց զաւակներուն :

Յայտնի է, որ մարդ երեք տեսակ
գլխաւոր պարտականութիւն ունի
այսինքն. 1. Անձնամածութիւն Անձական :
2. „ Հարցական.
3. „ Ստուերական.

եղբի երկուքը մէկդի դնելով առ այ-
ժըմ պիտի խօսիմք առաջին մասին
վրայ. որնոր ըստ իմ կարծեաց ամե-
նէն հարկաւոր մասն է, ինչպէս որ
բնութեան կարգն ալ անանկ կը պա-
հանջէ. այսինքն, նախ կաթենալ, երկ-
րորդ կամենալ, երրորդ առնել. և ո-
րովհետև մէկը մինչև որ կատարեալ
կարողութիւն չունենայ մարմնաւոր
(որ է բնական), ոչ կարող է ոչ ալ կը
կամի բան մը սիրելու, կամ բան մը՝ ի
գործ դնելու. ապա ուրեմն կարծեմ

սիսալած չեմք ըլլար եթէ նախ սկը-
սիմք խօսելու հեռուեալ հարցմանս
վրայ. "Տղայ մը ծնանելէն վերջը ինչ-
պէս նայելու է որ կատարեալ առողջ
և դիմացկուն ըլլալով շուտ ենթակայ
չ'ըլլայ հիւանդութեանց և չը մեռ-
նի": Ահա այս պիտի ըլլայ փոքրիկ
տետրակիս նպատակը. որմէ կ'սպա-
սեմ լոկ ընդունելութիւն մը առա-
ջարկութեանցս. քան թէ շահ:

ՐՆԿԱՆ ԽՆԱՄԱԾՈՒԹԻՒՆ

ՏՂԱՅ ՄԵՌՈՅՑԱՆԵԼ

Ի՞նչ-պէս պէտք է:

Ոչոր ծնած տղու մը համար ա-
ռաջին բանը հագուստն է. Ը. պէտք
է բոլորովին հրաժարիլ ամեն տեսակ
փաթթոցներէն և կապերէն, որոնք
կրնան որ և իցէ չափով իր շարժմա-

նը արգելք ըլլալ։ Բ. Տղեկը աղէկ մը նախ գաղջ ջրոյ մէջ լուալով թեթեւ լաթեղէնով մը ծածկելու է. անոր վրայէն թուլ շապիկ մը և ֆանէլա մը, և մէկ թեթեւ ֆլոպան մը, մարմնոյն որ և իցէ կողմը բնաւ կապ մ՝ունենալու չէ, կամ գօտի և այլն։

Տղայ լ-ալ։

Տղան ամեն առաւօտ արթննալուն պէս 80°–85° ջուրի մէջ բոլոր մարմինն լուալու է (ոչ երբէք կերակուրէն վերջը), ջրոյն ջերմութեան աստիճանը կամաց կամաց իջեցնելու է 70°–65° ի։

Կերակ-ր տղայոց։

Օ արհուրելի փնտաներ յառաջ եկած են մարդ այս մասին մէջ ունեցած տգիտութենէն, և յիրաւի երբէք չ՝եմ պատահած իմ աղգիս մէջ այնպիսի ընտանիք մը՝ որ ազատ ըլ-

լար այս սխալումէն. գիւղացիք աւելի
աղէկ կը կերակրեն իրենց մանկուն-
քը, քան թէ մեր քաղաքականաց-
եալ և կրթեալ տիկնայքը. հեռի են
անոնք ան խնդ և նոյն ժամանակը
միատակաք թիմերներէն ազայոց փա-
փուկ ստամոքսը անճոռնի կերակուր-
ներով, կարկանդակներով, ՝ՆՊՊՆե-
րով, և քանի մը տղայոց ստամոքսը
աւրող նիւթերով. գիտցուի թէ՝
որ ուչ խակ մէկ մայր մը պիտի համար-
ձակի իր ընթացքը շարունակելու, ե-
թէ գիտնայ թէ ինչ ահռելի հեռե-
ւանք յառաջ կուգայ իրենց տգի-
տութենէն. բարեկամուհիներէս մէ-
կը կայ որ երեք գեղեցիկ տղայոց կեն-
դանագիրը կը պահէ, և շարունակ
կ՚ողբայ անոնց մահը. թէ և հիմա ա-
ղէկ համոզուած է որ ինք իր ձեռքո-
վը զանոնք մեռցուցեր է՝ զանոնք տր-
գիտաբար կերակրելով, և ես շատ
անգամ զբուցած եմ իրեն թէ մեծ

հրաշքով անոնք մինչև երեք տարի ապրելու դիմացեր են. խեղճ որդեկորոյս մայր.... տակաւին կ'ողբայ. բայց և այնպէս ես չեմ կարծեր որ իրմէ ուրիշ ծնելիքները պիտի ապրին. ինչու որ ամենադժուար է համոզել մայր մը թէ իր սրտհեւտական ստամոքսը երբէք առաջնորդ չէ և չիկրնար ըլլալ տղեկի մը բնական մնուղին։

Ս՝արց կաթը, ինչպէս որ յայտնի է, տղեկին նախնական և ամենահարկաւոր կերակուրն ու մնուղն է. բայց եթէ պատահի որ կուրծքը կաթ չունենայ, այն ժամանակը քիչ մը անոյշ կաթ զուտ ջրով խառն կրնայ տրուիլ տղեկին. բայց սա՛ աղ դիտնալու է որ բայց՝ի մէկ քանի հաղիւ հանդիպած բացառութեանց, միշտ մայրը կաթ կրնան տալ քանի որ տղեկն կը կարօտի անոր։

Խնամածուք ընդհանրապէս շատ շուտ կ'սկսին կերակուր կամ թէ կա-

թէն 'ի զատ ուրիշ ուտելիք տալ տը-
զայոց, գրեթէ երբոյդ կամ չորրորդ
ամսոյն մէջ։ Ասանկ ընելու չէ. այլ
սպասելու է որ տղեկին ակռաները
բուսնի. (որն որ նշան մ'է թէ բնու-
թիւնն կ'ուզէ որ տղուն ուտելիք
տրուի ծամուելու) ան ատեն հարկ է
որ տղան կամ թէն 'ի զատ բան մ'ու-
տել սկսի, բայց հոս մեծ զգուշութիւն
մը պէտք է. երբէք կարծելու չէ որ
տղեկին ստամոքսը կարող է որ և ի-
նչ ուտելիք մը մարսելու. չէ, այլ տղին
ուտելիքները կրնան ըլլալ՝ արարօթ.
բարակ ալիւր, խաշած բրինձ. խա-
շած բանթաթէս, բարակ շաքար,
խաշած կամ որ և իցէ կերպով ե-
փած խնձոր (ոչ մնով). և ասոնցմէ
'ի զատ կամ նաւս, որով եթէ
խառնուին վերոյիշեալ ուտելիքները
աւելի աղէկ կ'ըլլան։

Տղայ մը եթէ այս ընթացքով
մնացուի շատ հիւանդութեանց դէմ

կրնայ դնել, կամ թէ ըսեմ բնաւ են-
թակայ չըլլար հետեւեալ հիւանդու-
թեանց, հարբուխ, «ՀԷՔՔ», հաղ,փորի
ցաւ, եռք, «ԲԱՂՈՂ», ուռեցք, մորթի
որ և իցէ հիւանդութիւն, ակռայի
ցաւ, և այլն և այլն և այլն. որոնք
ամեն տարի շատ տղեկներ գերեզման
կը տանին:

Ընդարմար կերակուրները մեծ աղ-
դեցութիւն ունին, նախ տղաքը նեղ-
սիրտ, վախկոտ, և դէշ բնութեան
տէր ընելու, նաև բթամիտ, հիւանդ
ու դանդաղ:

Միսը՝ որնոր մեծ պատճառ է տը-
դայոց մարմինը ու միտքը փնասելու,
հարկ է չի կերցնել տղեկին մինչև
6—7 տարեկան ըլլայ, և կամ բնաւ
եթէ կարելի է. միս ուտող տղեկնե-
ը միշտ ենթակայ են շուտ պաղառ-
նելու և դժնդակ հիւանդութեանց
մատնուելու:

Տղաք մէկ տարեկան եղած-ին պէս

սովորեցու են կանոնաւոր կերակրոյ ժամանակ ունենալու. ոչ թէ ուզած ատենին, կամ կէս գիշերուն. այլ մէկ անգամ առաւօտուն ելելէն գէթ մէկ ու կէս ժամ ետքը, յորեկին, և իրիկուան պառկելէն գոնէ մէկ ու կէս ժամ առաջ:

Ուսելիքները շատ անգամ կը գործածուին տղաքը լուս պահելու համար, որոնց օրինակները անթիւ ունիմք մեջերնիս, քիչ չեն տեսնուիր տղեկներ որոնց ձեռքը տրուած են կարկանդակ, անուշեղէն կամ որ և իցէ ուտելիք մը. այսպիսի տղաք միշտ լալկան և կանչուրտտոզ կ'ըլլան, եթէ մարը մէկ մը համոզուէին թէ ինչ տոկալի հետևանք պիտի ունենայ այսպիսի ընթացքները, այլ չ'եմ կարծեր թէ պիտի շարունակէին:

Խելք տալ:

Եթէ տղայ մը ամուցուի բաժիս

ղէս շատ քիչ անգամ պիտի կարօտի ըլլայ, բայց և այնպէս եթէ պատահի հարկ է որ մաքուր ջուր ըլլայ խմածը. վասն զի տղաք շատ ենթակայ են գէշ ջուրէ փնասուելու:

Բնաւ տաք խմելիք մի՛ տար տըղային:

Օրը չորս անգամ (առանց նկատելու իր ջուր ուզելը օրը հազար անգամ) տալու է տղային մէկ ապուրի դրդալով. ոմնոր պաղ ըլլալու է (ոչ սառուցեալ):

Բռնաւ պղայոց:

Տղեկը պարտի առանձին, մաքուր և լայնկեկ անկողին մը պառկիլ առանց կապերու ազատ ուզածին պէս շարժելու:

Պառկած սենեկին մէջ բաց պատուհան կամ որ և իցէ հով գալու տեղ ըլլալու չէ:

Սենեակը բարեխառն ըլլալու է:

Ծնողք տղեկին բնաւ լալուն լը-սելու չեն. վասն զի տղու մը լացին բնաւ չի հաւատացուիր. պառկելու ժամանակը մէկ տարեկան ըլլալէն վերջը որոշեալ ըլլալու է, այնպէս ալ ելլելուն. աղէկ է որ արեւը մարը մրտնելուն պէս պառկի և ելլելուն հետ ելլէ:

Սրն-ին-ն տղայոց:

Տղաք միշտ շարժման մէջ ըլլալն կը սիրեն և մարք մեծ անխրաւութիւն կ՚ընեն իրենց տղայոց, եթէ զանոնք արգիլեն խաղալէն, վազելէն. եթէ մայր մը չ՚ուզեր որ տղան տանը կահ կարասիքը կոտրտէ, թողզանոնք վերցնէ մէջ տեղէն:

Տղաք պարտին շարունակ խաղալ կամ չ՚էնէ հիւանդ ըլլալ:

Ծ՚ոյլ կամ հանդարտ տղայ մը հիւանդ կը սեպուի:

Հի-անդ-ոս-ԼԻ-ՆԻ փղայոց։

Տղաք եթէ բաւական պէս նայուին շատ հաղիւ կը պատահի որ հիւանդանան. իսկ եթէ մանր մունր հիւանդութիւն ալ պատահի նէ, աղէկ է որ բնաւ դեղ չիտան տղուն՝ այլ ուտելիքը թեթևցնելով անցընեն հիւանդութիւնը։

Բժշկական դեղերն են որ շատ տղաք դերեզման կը խրկեն։

Այս աեսրակս՝ եթէ կ'ուզես որ զաւկներդ առողջ ըլլան, քեզի առաջնորդ ըրէ, որոնց մտաւորական դաստիարակութեանը համար ալ քիչ ժամանակէն Տեսրակ մը պիտի հրատարակեմ. իսկ եթէ չէ, իմ ընելիքս քու մտացդ արթնութեանը համար աղօթելէն ուրիշ բան չիկրնար ըլլալ։

Վ. Ե Ր. Ջ.

[304]

ЦЕНА
Կկպ
343

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0596229